

## **Ադրբեջանահայ փախստականության ադապտացիայի ռազմավարությունները չարդախլվեցիների օրինակով. լքված միկրոհայրենիքի արձանագրումները նոր բնակավայրում**

2023թ.-ին հետազոտություններ են անցկացվել Հայաստանի փախստականական բնակչություն ունեցող մի քանի տասնյակ համայնքներում՝ Գեղարքունիքի, Լոռու, Վայոց ձորի, Կոտայքի, Արարատի, Տավուշի մարզերում, որոնց մի մասը միևնույն բնակավայրից տեղահանված և մեկ այլ բնակավայրում կոմպակտ բնակեցված փախստականական բնակչություն ունեցող համայնքներ էին, մասնավորապես՝ Հայանիստ, Արզնի, Արտամետ, Զորական, Այգուտ, Դպրաբակ, Դրախտիկ, Շողակաթ, Դպրեվան, Կարին, Նոր Ազնաբերդ, համայնքները:

Հետազոտված փախստականաբնակ բնակավայրերը իրենց հերթին տարբերակվում են չորս խմբի.

- Ղարաբաղյան կոնֆլիկտի հետևանքով հայաստանաբնակ ադրբեջանցիներից դատարկված գյուղեր, որոնցում բնակեցվել են կոլեկտիվ կամ անհատական փոխանակման ճանապարհով ճնշող մեծամասնություն կազմած ելքի մեկ բնակավայրից բռնի տեղահանվածները (օրինակ. Զորական, Այգուտ, Դրախտիկ, Շողակաթ, Դպրաբակ, Նոր Ազնաբերդ)
- գյուղեր, որոնք բնակեցվել են ելքի բնակավայրերից գաղթած խառը բնակչությամբ (օրինակ. Հովք, Խաչարձան, Հաղթանակ, Պղավան, Գեղամասար, Փոքր Մասրիկ, Սայաթ-Նովա)
- բնակավայրեր, որոնցում հիմնվել են փախստականական թաղեր՝ բնակեցվելով ելքի միևնույն բնակավայրից փախստականներով (Հայանիստ, Արզնի, Արտամետ, Երևան՝ Սիլիկյան թաղամաս)
- 1988-ից ի վեր Ադրբեջանից բռնի տեղահանված փախստականների համար հատուկ հիմնված փախստականական բնակավայրեր (Դպրեվանք, Կարին):

Փախստականության հետ խորքային զրույցները, բանավոր պատմությունները, ներգրավված դիտարկումները գալիս են հաստատելու, թե որքան կարևոր դերակատարում են ունենում ելքի հայրենիքի/կորսված հայրենիքի այս կամ այն արձանագրումները և ինչպես են դրանք դառնում փախստականության համար ադապտացիայի ռազմավարության մաս:

Այս չորս տիպի բնակավայրերի դեպքում էլ փախստականների համար ի սկզբանե կարևորվել է ինքնության /կորսված նախկին հայրենիքի պատկանելության/ պահպանումը:

Ինքնության պահպանման ցուցիչներից առանձնահատուկ կարևորություն ունեն բնակավայրի նախկին անվանման պահպանությունը, լեզուն, սրբազան/կրոնական լանդշաֆտում սրբավայրերի վերարտադրությունը, ինչպես նաև սոցիալական կապերը՝ որպես ընդհանուր կապիտալ: Դրանք են հիմնականում դառնում տվյալ փախստական համայնքի կառուցողական կենտրոնը:

Որպես միևնույն ելքի բնակավայրից տեղահանված փախստականներով կոմպակտ բնակեցված համայնք Զորականի օրինակը գալիս է վկայելու, որ ինքնության պահպանումը շատ ավելի արդյունավետ է լինում հոծ բնակավայրերում:

Չարդախլու-Զորական համայնքի օրինակով երևում են ինքնության բնութագրիչների պահպանման տարբերակները և ինքնության պահպանման «պայքարի» ընթացքը, հասկացվում թե ինչպիսի սոցիալական և մշակութային վերարտադրման ռազմավարություն են կիրառել չարդախլվեցիները նոր տարածքում ադապտացվելու համար:

**Անվան վերարտադրությունը.** Տարածքի անվանակոչումը միջավայրի մշակութային յուրացման կարևոր բնութագրիչներից է:

Անվան վերարտադրությունը լուծում էր միաժամանակ 1. նոր բնակավայրի նախկին ադրբեջանական անվան չեզոքացման խնդիրը, 2. նոր բնակավայրում ինքնության վերարտադրման խնդիրը և 3. հին բնակավայրի ողջ սոցիալական կառուցվածքի և մշակութային ժառանգության պահպանման/ վերարտադրության խնդիր:

Ինչպես Դեյվիդ Լեուպոլդն է նշում իր Հայերի, քրդերի և թուրքերի հիշողության վիճարկման քաղաքականությունը աշխատության «Քարտեզագրում և վերանվանում. պատմվածքի մակագրում լանդշաֆտի մեջ հատվածում. /David Leupold, Embattled Dreamlands. The Politics of Contesting Armenian, Kurdish and Turkish Memory, Routledge, NY&L, 2020 , Դեյվիդ Լեուպոլդ, «Պայքարված երազների հողերը»

«Հիմնվելով պատմելու, լռեցնելու և կատարման միջոցով պատմության իրականություն ստեղծելու վրա՝ քարտեզագրումը/վերանվանումը վերջնական ֆորմալացում է ներկայացնում՝ որպես «ընդհանուր դասակարգում», որը ներգրավում է ազգային պատմությունը լանդշաֆտի մեջ»:

Չարդախլվեցիների համար բնակավայրի վերանվանումը/ նոր տարածքի վրա նրա քարտեզագրումը սեփական պատմության մակագրումն է նոր լանդշաֆտի մեջ: Անգամ եթե պաշտոնական քարտեզում հնարավոր չլինի տեղայնացնել Չարդախլուն, այն արդեն տեղայնացված է ժողովրդական քարտեզում:

Այն կարծես ներկայացնում է վերջնական պաշտոնականացում, ֆորմալացում և հնարավորություն է ստեղծում ներգրավելու, տարածելու և շարունակելու ստեղծել այս լոկալ խմբի պատմությունը կոնկրետ լանդշաֆտի շրջանակներում:

Չնայած նրան, որ բոլոր չորս տիպի բնակավայրերի դեպքում էլ ի սկզբանե քննարկման, իսկ որոշ դեպքերում էլ իսկական «պայքարի» առիթ է դառնում ելքի բնակավայրի անվան վերարտադրությունը, ավելի շեշտադրված «պայքարում» են անվան համար հենց կոմպակտ բնակչությամբ բնակեցված բնակավայրերը /Չարդախլու, Մադրասա:/ Հասկանալի պատճառով՝ ելքի բնակավայրի անվան վերարտադրությունը նրանց համար էր, որ ավելի իրատեսական էր, քանի որ նոր համայնքը բնակեցված էր գերազանցապես իրենցով:

Եվ Մադրասայի և Չարդախլուի դեպքում ցայսօր էլ կիրառում են գյուղի «ժովրդական» անվանումը թե՛ 'գյուղաբնակների և թե՛ հարակից գյուղերի կողմից, այլ ոչ թե պաշտոնական Ջորական կամ Դպրեվանք անվանումները: «Մենք»-ի և «նրանք»-ի հստակ սահմաններում չարդախլվեցիները «մենք՝ չարդախլվեցիներ» եզրույթը կարծես համառորեն շարունակում են «պարտադրել» «նրանց»՝ հարակից գյուղերին, մարզկենտրոնին, շրջանին: Այսպես օրինակ. ինչպես մեր բանասացներն են նշում, «տաքսիստներն անգամ գիտեն, որ սա Չարդախլուն է, տաքսի նստելուց չենք ասում քչիր Ջորական, ասում են քչիր Չարդախլու»: Թեև այսօր գյուղում ապրում են նաև այլ բնակավայրերից եկած բնակիչներ, այնուհանդերձ երբ շրջկենտրոն են գնում կամ հիվանդանոց, մարզպետարան, նրանք նույնպես ներկայանում են որպես չարդախլվեցի, այլ ոչ թե զորականցի, ընդհանրապես ոչ մեկ զորականցի իրեն չի ասում, Ջորական անվանումը նշվում է միայն պաշտոնական փաստաթղթերում:

Լինելով իր բնույթով կոմպակտ չարդախլվեցիներով բնակեցված գյուղ, տարիների ընթացքում գյուղը կարծես կլանում է նաև նորահայտ բնակիչներին՝ կառուցելով իր նոր պատմությունը «Չարդախլու» անվան ներքո:

Եթե գյուղերի մեծ մասը նախկին գյուղի անվան վերարտադրության «պայքարի» ընթացքում փորձել, բայց հետո հրաժարվել են բնակավայրի անվանափոխության մտքից (ինչպես օրինակ Մադրասայի դեպքում), ապա նույնը չի կարելի ասել չարդախվեցիների մասին: Սակայն մադրասեցիները Մադրասայից գնացին, մնացին Դպրեվանքցիները:

Կարծիքներին, թե Չարդախլու անվանումը ադրբեջանական ծագում ունի, չարդախվեցիները դիմում են ժողովրդական ստուգաբանությանը և հիմնավորում են, որ այն ոչ թե ադրբեջանական, այլ պարսկական ծագում ունի. «Չարդախ» նշանակում է (պարսկերեն 14), քանի որ գյուղը համարվել է Գարդմանաց իշխանության 14-րդ բնակավայրը: Մի այլ պատում նշում է, որ չարդախ (չհար դաղ) նշանակում է չորս սար, որոնց փեշերին փռված է գյուղը և որը հետագայում տառադարձվել է Չարդախլու անունով «չորս լեռների միջև ընկած բնակավայր», վրացական բառարանում այն թարգմանված է «Ոսկե հովիտ»:

*Նման հիմնավորում են կիրառում նաև մադրասեցիները, հիմնավորելով գյուղի Մադրասա անվանումը որպես «արաբական» ծագման բառ, որն ի դեպ նշանակում է madrasa-դպրոց-դարասա-ուսումնասիրել»:*

Գնալով ավելի հեռու և փորձելով ֆորմալացնել գյուղի անվանումը չարդախվեցիները 2015-16 թվականներին գյուղի մուտքի մոտ տեղադրում են «Չարդախլու» ցուցանակը՝ որպես գյուղի իրական անուն և կրկին լծվում են գյուղի պաշտոնական անվանափոխության գործին: Ցուցանակի տեղադրման ժամանակ ժամանում են նաև ռուսաստանաբնակ չարդախվեցիները, ընդհանուր «մատաղ» են անում, հաջողություն մաղթում «բռնած» գործին: Չարդախլու անվամբ ցուցանակը շուրջ 3 տարի մնում է տեղադրված ճանապարհին: Ոչ տրնսպորտի նախարարությունը, ոչ ճամբաժինը որևէ խոչընդոտ չեն ստեղծում՝ հասկանալով, որ «գործը ընթացքի մեջ է» և շուտով լուծվելու է ի օգուտ «Չարդախլու»-ի: Դրան զուգահեռ գյուղացիները հարցը բարձրացնում են ընդհուպ մինչև Ազգային ժողով՝ օգտագործելով իրենց սոցիալական կապերը, իրենց համերկրացիների իմացուցությունը, Ազգային ժողովում մարզի շահերը ներկայացնող դեպուտատներին, հիմնավոր պահանջով գյուղի անվանափոխության հարցը ի օգուտ «Չարդախլու» -ի լուծելու համար: Ազգային ժողովի դեպուտատների ընտրության նախօրեին, երբ թեկնածուները ժամանում են գյուղ, գյուղի համար արդիական ու շատ կարևոր խնդիրների մասին բարձրաձայնելու փոխարեն / գյուղը ունի լուրջ ջրի խնդիր, ճանապարհի խնդիր, գազի խնդիրը կիսատ է լուծված/, բնակիչները ստորադասում են այս բոլոր խնդիրները և որպես գյուղի համար կարևորագույն ու առաջնային խնդիր բարձրաձայնում են հենց անվանափոխության հարցը:

Ինչու է այդքան կարևոր «Չարդախլու»-ի անվանափոխությունը և ի՞նչու են հենց այս գյուղի չարդախվեցիները ստանձնել գյուղը Չարդախլու անվանափոխելու հարցը, հետաքրքիր մեկնաբանություն ստացավ մեր բանասացի կողմից.

*«Էդ ամենը ինչը հենց էդ բառի մեջ ա, էդ բառը բոլորին համախմբում ա իրար, չարդախվեցի Կարմիրում ունենք՝ Այգուր ա կոչվում, Մասիսում ունենք՝ Խաչփառ ա կոչվում, Վ՛արդենիս ունենք Փոքր Մասրիկ ա կոչվում, մենք էլ Ջորական ենք կոչվում, բա Չարդախլուն ու՛ր ա, եթե «Չարդախլուն» գոնե լինի, էդ բոլորը կհամախմբվեն բառի մեջ: Տեսեք մի հասարակ բան, օրինակ մի ընտանիքում 5 երեխա կա, մեկը դուրս եկավ ընտանիքից, երկրորդը, երրորդը, չորրորդը, փոքրը մնաց, էդ ընտանիքի ավնադույթը ո՛ր մեկը ավելի լավ կարա պահպանի, փոքր չէ՞, դե մեր դեպքում էլ բոլորը գնացել են, մենք ենք մնացել, հիմնական «կորիզը» էս ա ու նախկին գյուղի 70-80 տոկոսը եկել ա ստեղ»:*

Այս դիպուկ նկարագրությունը գալիս է փաստելու, որ վերոնշյալ ինքնության պահպանման ցուցիչներից իր առանձնահատուկ դերն ունի **սոցիալական կապերի վերարտադրությունը՝** որպես ընդհանուր

կապիտալ: Իրավամբ չարդախվեցիների «կորիզը» հավաքվում է հենց Ջորականում: Նախկինում ունեցած սոցիալական կապերը և սոցիալական դերերի վերարտադրությունը նոր կոմպակտ բնակավայրում լրացուցիչ խթան են հանդիսանում ֆիզիկապես կորսված բնակավայրի մշակութային և սոցիալական վերարտադրության համար:

Եթե այլ բնակավայրերում անգամ նույն համագյուղացիների շրջանում նոր միջավայրում բնակիչները ստիպված են նորովի հարմարվել սոցիալական նոր դերերին/ նոր դպրոցի տնօրեն, նոր վարչական ներկայացուցիչներ/, ապա Ջորականում կյանքը կարծես բնականոն շարունակություն է գտնում /նախկին դպրոցի տնօրենը տրամաբանորեն ստանձնում և շարունակում է նոր բնակավայրում դպրոցի տնօրենի պաշտոնը, ուսուցիչների մեծ մասը տեղափոխվում են հենց Ջորական, գյուղապետարանի աշխատակիցները համապատասխանաբար ստանձնում են գյուղի վարչարարությունը:

Չարդախվեցիները առանձնանում են յուրահատուկ կազմակերպվածությամբ, երբ ընտրում էին իրենց նոր գյուղի տարածքը: Այսպես նոր բնակավայրի ընտրության համար Աբովյան քաղաքում գյուղի «ակտիվը» նախատեսում է ժողովներ, անգամ կազմվում են անցկացված ժողովների արձանագրություններ, նոր բնակավայրի ընտրությունը ընթանում է բուռն քննարկումներով, քանի որ մեծ էր ամբողջությամբ մեկ բնակավայր տեղափոխվելու ցանկությունը:

Կոլեկտիվ քննարկումների միջոցով հարցերին լուծում տալը հետագայում կիրառվում է նաև Ջորականում բնակարանների ընտրության ժամանակ, երբ կրկին գյուղի «ակտիվը» հանձնաժողով է կազմում և քանի որ բոլորը մեկ գյուղից են, ճանաչում են միմյանց, գիտեն միմյանց թողած ունեցվածքի չափը, նոր բնակավայրում բնակարանների ընտրությունը կազմակերպվում է նախկինի հնարավոր նմանությամբ՝ արդարության, հավասարության սկզբունքի պահպանմամբ:

Թե՛ պատմական, թե՛ կոլեկտիվ հիշողությունը հենված է մարդկանց գիտելիքներին և վերաբերմունքին իրենց ազգի իրական կամ պատկերացրած պատմական անցյալի ամբողջական կամ առանձին դրվագների շուրջ: Լոկալ այս խմբի հիշողությունը իր անցյալի մասին հյուսվում և ամփոփվում է պատումների երկու հետաքրքիր բովանդակությունների շուրջ, որոնցից մեկի հիմքում խիզախությունն է՝ ամփոփված զինվորականության մեջ, մյուսի հիմքում ընհանուր, կոլեկտիվ շահը:

Քչերին է հայտնի, որ Չարդախլուն ոչ միայն ԽՍՀՄ մարշալ Հովհաննես Բաղրամյանի, մարշալ Համազասպ Բաբաջանյանի, այլ նաև - ցարական բանակի հայազգի զորավար [Արշակ Տեր-Ղուկասովի](#), գեներալ-լեյտենանտ [Զհան Մարգարյանի](#) հայրենի գյուղն է և չարդախվեցիները իրենց ինքության հիմքում ունեն զորավարների, գեներալների մասին բազմաթիվ պատումներ և իրենք իրենց ընկալում են որպես կովող, մարտնչող, խիզախ, զինվորականի կերպարին արժանի ժառանգորդ և անպայման շեշտադրում են, որ Չարդախլուն հայտնի է իր երկու մարշալներով, տասներկու գեներալներով և ԽՍՀՄ յոթ հերոսներով:

Պատահական չէ, որ գյուղի նոր անվան ընտրության հիմքում ընկած է զորք, զորավոր, զորական անվանումը և որպես զորավարների գյուղ գյուղի բնակիչները կանգ են առել Չարդախլուի այլընտրանքային այս տարբերակի վրա / ինչպես Մադրասայի դեպքում՝ դպրե-վանք , մադրասա-դպրոց-վանք/: Բանասացների նշելով գյուղի բնակիչները իրենք քննարկել են իշխանական ներկայացուցիչների հետ միասին հարցը և առաջադրել այս անվանումը, այլ ոչ թե ընդունել են իշխանությունների կողմից առաջարկվող տարբերակները, ինչպես օրինակ Այգուտի, Դպրաբակի դեպքում:

Չարդախլվեցիները նույնչափ հպարտանում են համագյուղացի ցարական բանակի հայազգի զորավար, ցարական բժիշկ [Զհան Մարգարյանով](#): [Զահանմբեկ Մարգարյան գեներալը, որպես զինվորական բժիշկ կարողանում է բուժել Նիկոլայ կայսեր կնոջը՝ թագուհուն և որպես շնորհակալություն Նիկոլայը վերջինիս առաջարկում է խրախուսում` իր մատուցած ծառայության դիմաց: Մարգարյանը հրաժարվում է, բայց երբ կայսրը այնդում է, խնդրում է որպես խրախուսում Չարդախլուին վերադարձնել պատմական 14,500 հեկտար հողը, որը կայսերական հրամանագրով վերադարձվում է Չարդախլու գյուղի, որից հետո էլ Չարդախլուն էլ ավելի է ընդարձակվում և դառնում հարակից գյուղերին հովանավորող «թիկունք» պաշտպանող գյուղ:](#)

Էթնիկական, սոցիալական, մշակութային և քաղաքական ինքնության ցուցիչներից են նաև **լեզուն և կրոնը**: Եթե լեզուն այն է, ինչ մարդիկ կարող են տեղափոխել տեղից տեղ, ապա կրոնական պրակտիկաների մի զգալի մասը կապվում է որոշակի ֆիզիկական օբյեկտի հետ, որի շուրջ կառուցվող կրոնական պրակտիկաները կարող են դադարել վերջինիս բացակայության դեպքում:

Նոր միջավայրի աշխարհագրական տեղայնացման, դրա նյութականացման, ձևավորման և արժևորման մեջ կարևոր դեր ունեն ինչպես նախկին սրբավայրերից մասունքների տեղափոխումը նոր բնակավայր, այնպես էլ նոր հուշարձանների և հիշողության տարածքների ձևավորումը:

Հին մասունքների տեղափոխումը նոր բնակավայր հնարավորություն է ստեղծվում որոշակի չափով վերականգնել նախկին կրոնական պրակտիկաները:

Չարդախլուն ունեցել է բազում սրբավայրեր, ամենահայտնիներից էր ժողովրդի կողմից շատ սիրված ուխտավայր Խաչիսարը, Կաղնու խաչը, Մանդուռը, Չարդախլու և Բաղա գյուղի միջնամասում գտնվող Ոսկան Նահատակ սրբավայրը, որը ժողովրդական ավանվամբ հայտնի է որպես Բըլանլըղը, հենց այս սրբավայրի մոտ էին չարդախլվեցիները հիմնականում տոնում Վարդավառը: Ամենատարածված ուխտավայրը չարդախլվեցիների համար Խաչիսարի «Սուրբ Խաչ» ուխտավայրն էր, որի տեղափոխությունը դառնում է կարևոր գյուղի բնակիչների համար: Բռնագաղթից մի քանի ամիս անց մի խումբ երիտասարդ չարդախլվեցիներ որոշում են մեկնել Չարդախլու՝ բերելու Խաչինսարի «Սուրբ խաչը, չնայած նրան, որ արդեն Չարդախլուն վերաբնակեցվել էր ադրբեջանցիներով և մեղմ ասած անվտանգ չէր նախկին բնակավայր մեկնելը: Երբ հասնում են Խաչինսար, տեսնում են, որ խաչը վնասված է և բերել հնարավոր չէ, փոխարենը տեղափոխում են գյուղի մեկ այլ՝ «Կաղնու խաչը»՝ ամբողջությամբ պահպանված: Կաղնու Խաչի տեղադրումը տեղի ունենում գյուղի բարձր բլրի վրա, որտեղից Խաչը տեսանելի է ամբողջ գյուղի համար, այն տեղադրվում է մեծ մատաղի ուղեկցությամբ և տոնախմբությամբ, իսկ հետագայում կառուցվում է նաև Խաչինսարի «Սուրբ Խաչի» նմանությամբ ևս մեկ խաչքար և տեղադրվում Կաղնու Խաչի հարևանությամբ: Այժմ արդեն սրբատեղի և ուխտատեղի է համարվում չարդախլեցիների համար այս Խաչը, այլ բնակավայրերում բնակվող չարդախլվեցիները հարցազրույցների ժամանակ շեշտում են, որ իրենց «Սուրբ խաչը» բերվել և պահվում է Չարդախլու գյուղում:

Չարդախլվեցիները մեծ ցավով են հիշում Չարդախլույում թողնված Մարշալ Բաղրամյանի տուն-թանգարանի մասին, որը տեղափոխելու հնարավորություն չէին ունեցել և կարծես մարշալների հանդեպ պարտքի զգացողությունը ծանրացել էր համագյուղացիների ուսերին:

Նոր հուշարձանների և հիշողության տարածքների ձևավորումը նոր տարածքում ուղեկցվում է համագյուղացի մարշալների հիշատակին նվիրված կիսանդրիների տեղադրմամբ, որոնց կողքին էլ տեղ

են գտել նաև Արցախյան առաջին ազատամարտի, հայրենական մեծ պատերազմի, Եղեռնի հուշակոթողները, որոնք կարծես ամբողջացնում են ազգային և լոկալ խմբի հիշողության մարմնացումը գյուղի կենտրոնում գտնվող հուշակոթողների այս պուրակում: Դիմացի մայթին մեծ հուշատախտակ է՝ Արցախյան պատերազմների հերոսների նկարներով:

Յուրօրինակ «հիշատակի անկյուն» է հիշեցնում նաև վարչական ղեկավարի սեղանը՝ ամփոփելով վերջին տասնամյակների պատմությունը և նորոգելով չարդախվեցիների ինքությունը հերոսացման նոր պատումներով:

Ի դեպ գյուղի հուշակոթողները և մարշալների կիսանդրիները կառուցվել են թե՛ ռուսաստանաբնակ, թե՛ հայաստանաբնակ չարդախվեցի բարերարների նախաձեռնությամբ և անձնական միջոցներով, իսկ կառուցման աշխատանքներին մասնակցել է ողջ գյուղը, անգամ դպրոցահասակ աշակերտները ֆիզիկապես օգնել են շինարարական աշխատանքների ժամանակ, իսկ վարչական ղեկավարի սենյակի մի անկյունում լուռ կանգնած են երկու անվանական կոնյակներ՝ հետագայում բոլոր չարդախվեցիների ջանքերով գյուղում եկեղեցու կառուցման առիթով բացման սպասումով:

## **Հրանուշ Խառատյան**